## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

**Ո Ր Ո Շ Ու Մ**

«23» մարտի 2021 թվականի թիվ 5

# ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԾԻԱԾԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, նկատի առնելով, որ COVID-19-ը համավարակի պատճառով անորոշ ժամանակով դադարեցված է համայնքի <<Ծիածան>> մանկապարտեզի գործունեությունը, սակայն խիստ անհրաժեշտություն է համավարակի առկայությամբ մանակապարտեզի աշխատանքի վերսկսումը

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Ծաղկաբեր համայնքի <<Ծիածան>> մանկապարտեզի գործունեությունը վերսկսել 2021թվականի ապրիլի 1-ից:
2. Աշխատանքները վերսկսել ավագ տարիքային խմբի երեխաների համար, խստորեն պահպանելով COVID-19-ը համավարակի տարածումը կանխարգելող միջոցառումներն ու սանիտարական նորմերը:
3. Սույն որոշման պատասխանատվությունը դնել <<Ծիածան>> մանկապարտեզի տնօրեն՝ Սիրանույշ Իսրայելյանի վրա:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բոռջյան Աստղիկ | | 0 | 0 |
| Իգիթյան Արամ | | 0 | 0 |
| Իսրայելյան Ահարոն | | 0 | 0 |
| Ղազարյան Գագիկ | | 0 | 0 |
| Սարգսյան Սարգիս | | 0 | 0 |

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաղկաբեր համայնք
Հասցե-գ. Ծաղկաբեր
հեռախոս-099995888

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» մարտի 2021 թվականի թիվ 6

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի թիվ 1477-ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. *Տալ համաձայնություն Ծաղկաբեր համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը ՀՀ կառավարության 28.10.2010 թվականի թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով մինչև մեկ տարի ժամկետով առանց մրցույթի համայնքի ղեկավարի կողմից համայնքի արոտօգտագործողներին տրամադրելուն:*

2. Արոտավայրերից օգտվելու տարեկան վարձավճարի չափը սահմանել տվյալ հողամասի հողի հարկի տարեկան դրույքաչափին հավասար:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բորջյան Աստղիկ | | 0 | 0 |
| Իգիթյան Արամ | | 0 | 0 |
| Իսրայելյան Ահարոն | | 0 | 0 |
| Ղազարյան Գագիկ | | 0 | 0 |
| Սարգսյան Սարգիս | | 0 | 0 |

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ